

«ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Հ. Արդության փողոց 10 և 10/9 հասցեում բնակելի համալիրի կառուցման ՇՄԱԳՀ

**«ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ»**  
**սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

---

Երևան քաղաքում Հ. Արդության փողոց 10 և 10/9 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**

Կատարող՝ «Բոնսեկոարդ» ՍՊԸ  
Տնօրեն՝ Վ. Թևոսյան



Երևան - 2024

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ _____	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	6
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) _____	11
3.1. Ընդհանուր տեղեկատվություն _____	11
3.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ _____	14
3.3. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ _____	22
3.4. Նախապատրաստական աշխատանքներ _____	23
3.5. Շինարարական աշխատանքներ _____	24
3.5.1. Ընդհանուր դրույթներ _____	24
3.5.2. Ենթակառուցվածքներ _____	26
3.6. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում _____	28
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ _____	29
4.1. Տարածքի աշխարհագրական դիրքը _____	29
4.2. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները _____	32
4.3. Կլիման _____	33
4.4. Տարածքի սեյսմիկ բնութագիրը _____	36
4.5. Մթնոլորտային օդ _____	36
4.6. Զրային ռեսուրսներ _____	37
4.7. Հողային ռեսուրսներ _____	39
4.8. Կենսաբազմազանություն _____	40
4.8.1 Բուսական աշխարհ _____	40
4.8.2. Կենդանական աշխարհ _____	41
4.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	42
4.10. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ _____	42
4.11. Սոցիալ տնտեսական պայմանները _____	43
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՏԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	45
5.1. Ռիսկերի գնահատում _____	45
5.1.1. Օդի աղտոտում _____	45
5.1.2. Զրոգրագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն _____	48
5.2. Բնապահպանական միջոցառումների ծրագիր _____	48

5.2.1. Մթնոլորտային օդ	48
5.2.2. Զրային ռեսուրսներ	49
5.2.3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում	49
5.2.4. Հողային ռեսուրսներ	50
5.2.5. Կենսաբազմազանություն	52
5.2.6. Սոցիալական միջոցառումներ	52
5.2.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն	53
5.3. Փոխհատուցում	54
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	54
7. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	57
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	58
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ	62
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	65
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Անշարժ գույքի գրանցման վկայականներ	66
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Նախագծման թույլտվություն	73
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Քանդման թույլտվություն	75
ՀԱՎԵԼՎԱԾ 4.	76

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ընկերության կողմից նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023), ինչպես նաև այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվությանը ներառում է՝

- նախատեսվող գործունեության նկարագիրը, ֆիզիկական բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների ծավալները, ֆիզիկական ներգործությունների մակարդակը,
- նախատեսվող գործունեության հնարավոր տարբերակների, այդ թվում նաև հրաժարման (գրոյական) տարբերակի նկարագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը,
- հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի և բնական պայմանների նկարագիրը, էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունների, ռիսկերի ու օգուտների վերլուծությունը և գնահատումը,
- հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը, ազդեցության ծավալները, ինչպես նաև նվազեցման, մեղմացման կամ վերացման հնարավորությունները,
- բացասական ազդեցությունների կանխարգելման, մեղմացման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումների (շինարարության և շահագործման փուլերում) ծրագիրը,

- նախատեսվող գործունեության, հնարավոր ազդեցությունների, վերլուծությունների և գնահատումների պատկերավոր վկայություններ, մասնավորապես՝ աղյուսակներ, նկարներ, քարտեզներ, գրաֆիկներ, սխեմաներ և այլն:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում /այսուհետ՝ ՇՄԱԳՀ/ ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Հ. Արդության փող. 10: Գործունեության վայրը՝ ք. Երևան Արաբկիր վարչական շրջանի Հ. Արդության փողոց, 10 և 10/9 հասցե, որը բաղկացած է 4,8687 հա ընդհանուր մակերեսով երկու հողամասից, ներառյալ՝ 01-003-0203-0088 կադաստրային ծածկագրով հողամասը՝ 4,362 հա մակերեսով, որը պատկանում է «Մետտա գրուպ» ՍՊԸ-ին, և 0,506 հա մակերեսով հողատարածք, կադաստրային ծածկագիր՝ 01-003-0203-0290, որի համար կնքվելու է վարձակալության պայմանագիր (Տես՝ Հավելվածներում):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն) հոդված 12-ի կետ 8-ի, Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ. Արդության փողոց 10 և 10/9 բնակելի համալիրի կառուցումը ենթակա է բնապահպանական փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ<sup>2</sup>-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 48 687 մ<sup>2</sup>):

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն հաշվետվությունում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- օդային ավազանի աղտոտում շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

- շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Երևան համայնք, Արաբկիր վարչական շրջան/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում,
- հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,
- հողերի աղտոտում շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հաշվետվությունում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Հաշվետվության մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ: Նախատեսվող գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքում, արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և

նրանից բխող ենթաստորադասական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արդույթյան փողոց 10 և 10/9 հասցեում բնակելի համալիրի կառուցում աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝** խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսմաների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) - կարգավորում է.

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական եւ կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«Հողի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարություն** 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում և ՀՀ կառավարության 27 սեպտեմբերի 2018 թվականի N 1029-Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը:

**ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** - Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), որը պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության



առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**ՀՀ Զրային օրենսգիրք (04.06.2002թ.)** – նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.)** - կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

**«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (03.04.2000թ.)** - սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

**«Քուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (23.11.1999թ.)** - սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

**«Բնության հարուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (27.11.2006թ.)** - կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

**Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թթվածնի ազդեցությունը որոշելու համար:

ՇՄԱԳՀ կազմելիս ընկերությունն առաջնորդվել է նաև հետևյալ որոշումներով՝

- ՀՀ կենդանիների մասին գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N71-Ն, 29.01.2010թ.)

- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N72-Ն, 29.01.2010թ.)
- ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N967-Ն, 14.08.2008թ.)
- Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ. N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում (N108-Ն, 8.02.2018թ.)
- ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում (N781-Ն, 31.07.2017թ.)

### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2019), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգը, Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Շինարարության ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

#### 3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արդյության փողոց 10 և 10/9 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում: «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բնակելի համալիրի կառուցման տարածքը գտնվում է Արաբկիր համայնքի Հ. Արդյության փակուղու և Ա. Գրիբոյեդով փողոցների միջակայքում՝ 48 687 քմ տարածքի վրա: Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը:

Նախագծվող հողամասի հյուսիսային մասում Հ. Արդյության փողոցն է, իսկ արևմուտում Գրիբոյեդովի փողոցը: Տարածքի հարևանությամբ գտնվում են հասարակական և արտադրական նշանակության շենք շինություններ:

Հողամասը կառուցապատված է արտադրական, չգործող, խարխուլ վիճակում գտնվող տարբեր տեսակի շինություններով և պահեստային տարածքներով: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Ընկերությունը մտադրված է կառուցապատման աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով: ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվել են համապատասխանաբար՝ բնակավայրերի և բնակելի կառուցապատման (Որոշումը տես՝ Հավելվածներում):

Քանի որ տարածքը կառուցապատված է, իրականացվելու են քանդման աշխատանքներ (Քանդման թույլտվությունը՝ տես հավելվածներում): Տարածքում գրեթե բացակայում է հողային ծածկույթը, տեղանքը խիստ քարքարոտ է, տեղ-տեղ հանդիպում

է բերի հողի շերտ, որը սակայն չի գերազանցում 10 սմ հաստությունը և չի կարող առանձին օգտահանվել: Սակայն, քանի որ հետագայում կարիք կլինի տարածքը կանաչապատել, ապա հնարավոր չափով կպահպանվի հողի վերին շերտը, որի մի մասը բուսահող է: Բուսահող պարունակող հողային զանգվածի մոտավոր ծավալը գնահատվել է 2400 մ3: Կանաչապատման համար անհրաժեշտ ծավալը կլրացվի դրսից բերված բուսահողով, սրն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

Տարածքում կան մոտ 80 ծառեր և 20 թփեր, ծառերի մոտ 20 տոկոսը բարդիներ են, իսկ մնացածը վայրի փշատերևներ, որոնք անխնամ վիճակում են, մասամբ չորացած և ենթակա են հատման: Հատված ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել մոտ 240 ծառեր, որոնք հարմար են տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին:

Հողամասերը փոքր-ինչ ռելիեֆային են, թեքության տարբերությունը 5,1 մ: Շինարարության սեյսմիկությունը 9 բալ:

Նախատեսվում է իրականացնել երկու համալիր, 18 հարկից բաղկացած բազմաբնակարան շենքեր: Ստորգետնյա 4 հարկ: Շենքերի բարձրությունը հողի վերգետնյա հատվածից 62.7 մ է, իսկ նշանակությունը ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Տանիքները հարթ են: Արտաքին հարդարումը և գունային լուծումները, բարձրությունը, նպատակային նշանակությունը, տարածքի կազմը համապատասխանում են հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքին: Հարդարման մեջ գերակշռում են գույների զուսպ երանգները:

Շենքերը նախագծված են արտահայտիչ դինամիկ ձևերով:

Հողամասում առկա քանդման ենթակա շինությունների զբաղեցրած մակերեսը գումարային կազմում է 4372.3 քմ:

Նկար 1.



### 3.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի բնակելի թաղամասում: Բնակելի համալիրը նախատեսված է կառուցել ք. Երևան Արաբկիր Արաբկիր վարչական շրջան, Հ. Արդուբյան 10 և 10/9 հասցեներում հասարակական և արտադրական շենք շինությունների հարևանությամբ: Ինչպես արդեն նշվել է բնակելի համալիրի կառուցման համար հատկացված հողատարածքը գտնվում է Հ. Արդուբյան փակուղու և Ա. Գրիբոյեդով փողոցների միջակայքում՝ 4.8687 հա տարածքի վրա:

Բնակելի համալիրի արտաքին ինժեներական ցանցերի նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ մշակվել են համաձայն ծառայությունները մատուցող կազմակերպությունների տրանսդրադ տեխնիկական պայմանների:

Համաձայն նախագծի նախատեսվում է իրականացնել երկու համալիր, 18 հարկից բաղկացած բազմաբնակարան շենքեր: Ստորգետնյա 4 հարկ:

Շենքերի բարձրությունը հողի վերգետնյա հատվածից 62.7 մ է, իսկ նշանակությունը ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Կայանման թողունակությունը 3123 մեքենա՝ ստորգետնյա ավտոկայանատեղիում, 57 մեքենա՝ վերգետնյա ավտոկայանատեղիում: Նախագծված է տեխնիկական պահանջներին համապատասխան անհրաժեշտ տարիանման աստիճանավանդակներ և ելքեր համալիրի շենքերից:

Համալիրի շենքերի կոնստրուկցիոն սխեման՝ մոնոլիտ երկաթբետոնե կարկաս, տանիքը հարթ:

Աստիճանավանդակները առանձնացված են միջանցքներից հակահրդեհային ինքնափակվող դռներով, իսկ նկուղային հարկերում ավտոկայանատեղիի հարկերը՝ ինքնափակվող դարպասներով:

Ջեռուցումը և հովացումը նախատեսվում է կենտրոնացված: Շենքերը նախագծված են արտահայտիչ դինամիկ ձևով: Ճակատները՝ օդափոխվող, ապակեպատ մեծ հարթություններով: Կախովի սալաքարերը ճակատների վրա իրականացված են բնական տուֆից:

Հարդարման մեջ գերակշռում են գույների զուսպ երանգները: Պատուհանները և վիտրաժները՝ այլումինե:

Կառուցապատվող տարածքում լինելու է նաև հանգստի գոտի, խաղահրապարակ, մարզադաշտ, շների վարժեցման հրապարակներ, առանձին կանաչապատ տարածքներ, ինչպես նաև թաղամասի սպասարկման համար օժանդակ շինություններ:

Բոլոր շենքերում նախատեսված են վերելակներ, տարհանման աստիճաններ ու ելքեր:

Հողամասում առկա է քանդման ենթակա շինություններ, որոնց մակերեսը ընդհանուր կազմում է 4372.3 քմ: Շինությունների քանդման արդյունքում կառաջանա 13120խմ ծավալով տարբեր տեսակի շինարարական աղբ և թափոններ, որոնց մի մասը կօգտագործվի շինարարական աշխատանքների համար, իսկ մնացածը կհեռացվի համապատասխան աղբավայրեր:


Գործունեության ենթակա տարածքի հարևանությամբ գտնվում են հասարակական և արտադրական նշանակության շենք շինություններ: Հողամասին կից տարածքներով անցնում են գործող ինժեներական ենթակառուցվածքները:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ - III գոտու համար (9 բալ և ավելի):

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է մոտ 72 ամիս շինարարության տևողություն:


Ստորև՝ նկար 2-ում ներկայացված է գշխավոր հատակագիծը մերձակա տարածքների հետ









Նկար 3. Ակրոկայանապեղի



### План первого этажа М 1:1000







## ПЛАН 18-ГО (ТЕХНИЧЕСКОГО) ЭТАЖА М 1:1000





## ПЛАН КРЫШИ М 1:1000



### 3.3. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Համալիրի տեխնիկական և տնտեսական ցուցանիշները

- Հողամասի մակերեսը՝ 48 687 մ<sup>2</sup>
- Կառուցապատման մակերեսը՝ 16 376 մ<sup>2</sup> - 33,7%
- Կանաչապատման մակերեսը՝ 19 784 մ<sup>2</sup> - 40.6 %
- Անջրանցիկ մակերեսը՝ 12 525.5 մ<sup>2</sup> -25.7 %

Նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի մոտ 40.6%-ը /մոտ 19 784 մ<sup>2</sup>/:

Կանաչապատման աշխատանքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատվող տարածք կբերվի բուսահող՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված, քանի որ տարածքը քարքարոտ է, գրեթե չկա բերրի հողի շերտ, տեղ-տեղ հանդիպում է բերրի հողի շերտ, որը չի գերազանցում 10 սմ հաստությունը, որը սակայն հնարավոր չէ օգտահանել և օգտագործել բարեկազման համար:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության N108-Ն որոշման, և ներառելու է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է թույա, կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, թղկի, լացող ուռենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Երևանյան լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Ոռոգումն իրականացվելու է տարածքում գործող ոռոգման ցանցի միջոցով, որը ենթակա է վերանորոգման, այն պատկանում է «Մետտա գրուպ» ընկերությանը: Ցանցը միացված է Երևան ՋՕԸ ոռոգման ցանցին Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ:

Շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքներից առաջացող հանույթի զանգվածը ընդհանուր կառուցապատվող տարածքի համար կորոշվի շինթույլտվության փուլում: Հիմքերի փորման ժամանակ առաջացած

մնացորդային հողային գրունտն ամբողջությամբ կտեղափոխվի արտոնագրված աղբավայրեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և շինաղբը Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված տեղափոխվելու կամ տեղադրվելու են համապատասխան աղբավայրերում: Տարածքում առկա շինությունների քանդումից կառաջանա 13120խմ ծավալով տարբեր տեսակի շինարարական աղբ և թափոններ, և հողային աշխատանքներից առաջացած հանույթ, որոնք սահմանված կարգով կհեռացվեն շինհրապարակից:

### 3.4. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքման ժամանակավոր տարողության տեղադրում
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,

*Շինհրապարակի կազմակերպման ընդհանուր սխեմա.*

- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
  - մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
  - անվտանգության նշանների տեղադրում,
  - հակահրդեհային միջոցների տեղադրում:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինհրապարակում կարևորվում են հետևյալ միջոցառումների կատարումը:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:
- Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:
- Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

### 3.5. Շինարարական աշխատանքներ

#### 3.5.1. Ընդհանուր դրույթներ

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 72 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և



մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Շինարարական աշխատանքներում ներգրավված կլինեն մոտ 120 բանվոր:

Շինարարությունը իրականացվելու է հետևյալ մեքենա – մեխանիզմներով՝ էքսկավատորներ, ինքնաթափ ավտոմեքենաներ, ավտո և աշտարակային կռունկներ, բետոնախառնիչ ավտոմեքենաներ և այլն:

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի կամ սորուն նյութերի պահեստներ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրոյթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը պետք է մշտական խոնավ պահել:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են ՇՄԱԳՀ հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

### *Հողային աշխատանքներ*

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են III, VI կարգի: Գրունտերի մշակումը փոստրակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” էքսկավատորով:

Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ:

Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը:

Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ:

Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

### **3.5.2. Ենթակառուցվածքներ**

#### ***Ջրամատակարարում և ջրահեռացում***

Բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության 10 և 10/9 հասցեներում հատկացված հողատարածքում, բնակելի շենքերի կառուցման աշխատանքային նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ կներառի՝

- արտաքին և ներքին ջրամատակարարում
- տարածքի ոռոգում
- արտաքին և ներքին կոյուղի
- անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան ջրամիացման, հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն:

Տարածքում առկա է ջրամիացման և ջրահեռացման համակարգ, որը սակայն ունի վերանորոգման անհրաժեշտություն:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ

ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

### ***Ներքին տաք, սառը ջրամատակարարում և տաք ջրի շրջադարձ***

Բնակելի համալիրի ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե Մ50-15մմ խողովակներով:

Նախատեսվում է կենցաղային խմելու և հրդեհաշիջման միասնական համակարգ: Սառը ջրի համակարգից նաև սնում է տրվում օդորակման և օդափոխության սարքավորումներին: Սանիտարական բոլոր սարքերը տաք և սառը ջրամատակարարման համակարգից անջատելու համար տեղադրվում են համապատասխան փականներ:

Նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում՝ հակահրդեհային կանգնակների վրա, համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր:

### ***Ներքին և արտաքին ջրահեռացում՝ կոյուղի***

Շենքերի կոյուղաջրերը կհեռացվեն միասնական ինքնահոս համակարգով կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ձևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով:

Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր: Շենքից կոյուղաջրերը կլցվեն կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է տարածքում գործող կոյուղագծի դիտահորին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

### ***Աձրևաջրերի հեռացում /հեղեղափար կոյուղի/***

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում կտեղադրվեն անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները:

### 3.6. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնակելի շենքերի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինարարության ընթացքում շինհրապարակների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն (տես՝ Հավելված 4)՝ գոյություն ունեցող ջրատարից: Այն միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին (տեխնիկական պայմանը տրված է Գարիկ Զոբյանի անունով, ով հանդիսանում է ընկերության հիմնադիրներից մեկը): Ըստ գործող օրենսդրության ջրօգտագործման թույլտվության համար ընկերությունը կարող է դիմել դրական փորձաքննական եզրակացության դեպքում:

Շինարարության ընթացքում կոյուղին միացված կլինի քաղաքային կոյուղատարին:

Շինարարական աշխատանքներից բուսահող չի առաջանում, քանի որ տարածքն ամբողջովին կառուցապատված է: Այլ բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում:

Շինարարական թափոնները, որոնք ներկայացնում են մնացորդային հողային գրունտները, տարածքում առաջացող շինադրը և տարբեր տեսակի թափոնները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված աղբավայրեր, կամ կօգտագործվեն քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Ինչպես արդեն նշվեց բնառեսուրսներից շինարարության ընթացքում կօգտագործվի ջուր՝ ջրցանի և անձնակազմի կենցաղային կարիքների համար:

Հողային և շինարարական աշխատանքները կտևեն մոտավորապես 4 տարի /ընդհանուր՝ 5 տարի, ներառյալ նախապատրաստական և ավանտական փուլերը/: Ջրցանը իրականացվելու է տարվա տաք և չոր եղանակին: Նման օրերի հաշվարկային թիվը ընդունվում է տարեկան 180 օր, ընդամենը՝ 720 օր:

Ջրցանի օրական ջրապահանջը կկազմի՝

$$W = S \times 3 \times 0.0015, \text{ որտեղ.}$$

S – ջրցանվող տարածքը կազմում է 3600 մ<sup>2</sup>, որից 2000 մ<sup>2</sup> շինհրապարակի տվյալ պահին օգտագործվող մակերեսը, 1600 մ<sup>2</sup> ներքին ճանապարհները:

3 - օրական ջրցանի քանակը,

0.0015 – 1 մ<sup>2</sup> ջրցանի նորմը լիտրերով:

$W = 3600 \text{ մ}^2 \times 3 \times 0.0015 \text{ լ/մ}^2 = 16.2 \text{ մ}^3$ , ընդամենը՝  $16.2 \text{ մ}^3 \times 720 = 11664 \text{ մ}^3$ :

դ. Խամելու-տնտեսական կարիքներ

Ջրապահանջը հաշվարկվում է համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խամելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$W_{\text{խ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$ , որտեղ

- $n_1$  – ԻՏԱ թվաքանակն է՝ 25 մարդ
  - $N_1$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ
  - $n_2$  – բանվորների թվաքանակն է՝ 95 մարդ
  - $N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ
  - $T$  - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շինընթացքում՝ 1560 օր
- $W_{\text{խ.}} = (25 \times 0.016 + 95 \times 0.025) \times 1560 = 4329 \text{ մ}^3/\text{տարի}$ :
- Օրական՝ 2.775 մ<sup>3</sup>/օր:

#### 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

##### 4.1. Տարածքի աշխարհագրական դիրքը

Նախատեսվող շինարարությունն իրականացվելու է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության փողոց 10 և 10/9 հասցեներում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիրի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևմտյան մասում, Հրազդան գետի ձախափնյա ջրբաժանի հարավ-արևելյան լանջերի վրա:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:




Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության փողոց, 10/9 հասցեում բնակելի համալիրի կառուցման ՇՄԱԳՀ

Նկար 4. Տարածքի քարտեզ-սխեմա





Նկար 5. Իրավիճակային սխեմա



#### 4.2. **Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները**

Հետազոտվող տեղամասը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում: Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային չստորաբաժանված համախմբերի առաջացումները՝ ներկայացված բազալտներով, անդեզիտա-բազալտներով, դոլերիտներով, Հրազդանի գետի բարձր վերողողահունային դարավանդի առաջացումները՝ ավազ, կավավազ, ճալաքարա-կոպճային, ճալաքարա-գլաքարային գրունտներ, ինչպես նաև ժամանակակից առաջացումները՝ ավազներ, կավային և խոշորա-բեկորային գրունտներ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- ասֆալտաբիտումային ծածկոց
- լիցքային գրունտ
- խոշորա-բեկորային գրունտներ
- ժայռային և կիսաժայռային գրունտներ:

Հիդրոերկրաբանական տեսակետից շրջանի և հետազոտվող տեղամասի ստորգետնյա ջրերը կապված են հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են լավատակի, միջլավային տարատեսակներին, ինչպես նաև բերվածքային այլովիա-պրոյովիալ առաջացումների հետ, որոնք հանդիսանում են հունատակի, վերաողողահունային տարատեսակներին պատկանող ջրեր: Ներկայացված են նաև՝ Հրազդան գետի բարձր դարավանդի և Գետառ գետի պալեոհունի այլովիա-պրոյովիալ առաջացումների հետ կապված ծակուկենա-դատարկություններով գրունտային ջրեր:



#### 4.3. Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -20.6 °C, բացառձակ առավելագույնը՝ +42 °C:

Տարածքի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս–սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը՝ 354 մմ:

Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 37% – 61%:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը:

Ձյան առավելագույն տասնօրյակային բարձրությունը հասնում է 50սմ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում են մի քանի կլիմայական տվյալներ մոտակա՝ Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Արղության փողոց, 10/9 հասցեում բնակելի համալիրի կառուցման ՇՄԱԳՀ

Աղյուսակ 4.1 Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 4.2 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արաբկիր	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Աղյուսակ 4.3 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Աղյուսակ 4.4. Ձյան ծածկույթը


	<b>Ձյան ծածկույթը</b>			
Բնակավայրի անվանումը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Արաբկիր	50	53	152	-

Աղյուսակ 4.5 Քամու պարամետրերը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրորի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արաբկիր	Հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9						
	Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1				
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5						
	Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4				
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6						
Հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8					
	2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0							

#### 4.4. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կառուցապատման համար նախագծված տարածքի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:



Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով

Նկար 6. Սեյսմիկ գոտիավորման քարտեզ

#### 4.5. Մթնոլորտային օդ

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան:

2023 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Տարվա ընթացքում փոշու և ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ները համապատասխանաբար՝ 1.1-4.8 (129 օր) և 1.1-2.7 (43 օր) անգամ: Փոշու առավելագույն կոնցենտրացիան (0.988մգ/մ<sup>3</sup>) դիտվել է մարտի 7-ին՝ Նոր

Նորք համայնքում: Ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (0.110մգ/մ<sup>3</sup>) դիտվել է հոկտեմբերի 15-ին՝ Շենգավիթ համայնքում:

Իրականացված դիտարկումների 35%-ում դիտվել են փոշու, 29%-ում՝ ազոտի երկօքսիդի, 18%-ում՝ ծծմբի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից չեն դիտվել: Մայրաքաղաքում աղտոտվածությունը կարող է պայմանավորված լինել բնակլիմայական պայմաններով, աղտոտման աղբյուրներով (տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը), ինչպես նաև կանաչ տարածքների սակավությամբ:

Քաղաքի մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ, ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ 2.0 (փոշի՝ 0.96, ծծմբի երկօքսիդ՝ 0.32, ազոտի երկօքսիդ՝ 0.63, գետնամերձ օզոն՝ 0.08):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու, գետնամերձ օզոնի, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների աճման տենդենց\*

(Աղյուսակ 2): Աղյուսակ 4.6. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2022թ.

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համարը)	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	ՍԹԿ միջին օրական, մգ/մ <sup>3</sup>
Ծծմբի երկօքսիդ	0.063 (դիտ. N18)	0.016	0.05
Ազոտի երկօքսիդ	0.11 (դիտ. N2)	0.028	0.04
Փոշի	0.988 (դիտ. N8)	0.145	0.15
Գետնամերձ օզոն	0.027 (դիտ. N7)	0.007	0.03

#### 4.6. Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը

ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

### ***Գեղամիջրավազանային կառավարման տարածք (ԶԳ)***

Հրազդանի ԶԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:


Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և այլումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև, Երևան 13 քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Ներկայացվող տարածքը գտնվում է Հրազդանի կիրճի հարևանությամբ, հեռավորությունը անմիջապես Հրազդան գետից կազմում մոտավորապես 490մ:

Նկար 7.

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



4.7. Հողային ռեսուրսներ

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին

աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ:

Տարածաշրջանում հանդիպում են հողաձածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ներկայացվող տարածքը ամբողջությամբ կառուցապատված է և այստեղ բաց հողային մակերեսներ չկան:

Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի դիտարկվում, քանի որ նոր հողաձածկ տարածքներ չեն ներառվելու, հողաձածկի վնասում և խախտում չի լինելու, օգտագործվելու է արդեն ամբողջությամբ կառուցապատված տարածքները:

#### 4.8. Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի արդյունաբերական գոտում, գրեթե ամբողջությամբ կառուցապատված է արտադրական շինություններով: Տարածքում կան մոտ 80 ծառեր և 20 թփեր, ծառերի մոտ 20 տոկոսը բարդիներ են, իսկ մնացածը վայրի փշատերևներ, որոնք անխնամ վիճակում են, մասամբ չորացած և ենթակա են հատման: Հատված ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել մոտ 240 ծառեր, որոնք հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին:

Ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

##### 4.8.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրազուրկ



կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ կառուցապատված են՝ զուրկ բուսական կամ հողային ծածկույթից:

#### 4.8.2. **Կենդանական աշխարհ**

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կոյր օձուկը, ոնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

#### **4.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Արաբկիր վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

#### **4.10. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ**

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված են երկրաբանական, ջրատերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են վերը նշված որոշման համաձայն պատմամշակութային կամ բնության հուշարձանները:

**4.11. Սոցիալ տնտեսական պայմանները**

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում: Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից<sup>1</sup>:

*Աղյուսակ 4.7. Երևանի ընդհանուր ցուցանիշները*

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 321.5 հա
3	այդ թվում վարելահողեր	909.9 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ	1 098.9 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2020թ.	36.9 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

<sup>1</sup> [www.armstat.am](http://www.armstat.am)

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2022թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

*Աղյուսակ 4.8. Երևանի տնտեսության համամասնական ցուցանիշները*

✓ արդյունաբերություն	34.8%,
✓ շինարարություն	43.3%,
✓ մանրածախ առևտուր՝	71.7%,
✓ ծառայություններ՝	86.1%:

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Արաբկիր վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին մարզին:

*Աղյուսակ 4.9. Ազդակիր վարչական շրջանը*

Վարչական շրջան	Տարածքը, հա	Բնակչության թվաքանակը 2022թ. տարեվերջին, հազ.մարդ
Արաբկիր	1 325	114.9

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 5.1. Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կորսնորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- քանդման ընթացքում /գոյություն ունեցող շինության միջնորումներ, հատակ, տանիք և այլն/
- նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում
- հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված
- շինարարական տեխնիկայի շահագործմամբ
- բետոնային աշխատանքների իրականացմամբ
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված
- շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

#### 5.1.1. Օդի աղտոտում

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են առկա



շինությունների քանդման, նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության ավելացում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

**ա) Քանդման աշխատանքներ**

Պատերի, առաստաղի, աստիճանների և հատակների քանդման ընթացքում առաջանում են փոշու արտանետումներ: Քանի որ հատուկ մեթոդակարգ քանդման աշխատանքների համար չկա, այստեղ կիրառվել է “Շինարդյունաբերության չկազմակերպված աղբյուրների արտանետումների հաշվարկման” ուղեցույցի բանաձևով.

$$Q = (K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times B \times G \times 10^6) / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K<sub>1</sub> -ը փոշու զանգվածային բաժինն է քանդված թափոններում, 0.05

K<sub>2</sub> -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէրոզոլային մասնիկների, 0.02

K<sub>3</sub> -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K<sub>4</sub> -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1.0

K<sub>5</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում քանդված զանգվածի խոնավությունը, 0.4 /հաշվի առնելով բնական խոնավություն և ջրցանը/

K<sub>7</sub> –ը գործակից է, որը հաշվի է առնում զանգվածի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.5

G -ն՝ քանդված զանգվածն է՝ 13 120 մ<sup>3</sup>

Քանդման աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 1 տարի կամ

12 ամիս x 22 օր x 8 ժամ = 2112 ժամ/շինարարություն:

$$G = 13\ 120\ մ^3 : 2112 = 6.2\ մ^3/ժամ$$

Հաշվի առնելով միջին տեսակարար կշիռը՝

$$6.2\ մ^3/ժամ \times 2.2\ տ/մ^3 = 13.64\ տ/ժամ:$$

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 0,5 \times 13.64 \times 10^6) / 3600 = 0,30\ գ/վրկ$$

$$\text{Տարեկան՝ } 260\text{օր/տարի} \times 8\ \text{ժամ/օր} \times 3600\ \text{վրկ/ժամ} \times 0,30\text{գ/վրկ} : 10^6 = 2.25\ \text{տ/տարի}$$

**բ) Հողային աշխատանքներ**

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = (K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times B \times G \times 10^6) / 3600\ (գ/վ),\ \text{որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քանո միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1.0

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.6 / հաշվի առնելով բնական խոնավություն և ջրցանը /

K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.6

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 տարի կամ 48 ամիս x 22 օր x 8 ժամ = 8448 ժամ/շինարարություն:

Հանվող հողագրունտի ծավալը ըստ փորձագիտական տվյալների կազմում է 32 752 խմ

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է  $G=32\ 752\ մ^3 : 8448 = 3.88\ մ^3/ժամ$  կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝  $3.88\ մ^3/ժամ \times 1.6\ տ/մ^3 = 6.2\ տ/ժամ$ :

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 1 \times 0.6 \times 0.6 \times 0,6 \times 6.2 \times 10^6) / 3600 = 0.372\ գ/վրկ$$

$$\text{Տարեկան՝ } 260\text{օր/տարի} \times 8\ \text{ժամ/օր} \times 3600\ \text{վրկ/ժամ} \times 0,372\ \text{գ/վրկ} : 10^6 = 2.79\ \text{տ/տարի}$$

Ընդհանուր 5 տարվա համար քանդման և հողային աշխատանքներից փոշու արտանետումները կկազմեն

$$2.25\ \text{տ/տարի} + (4 \times 2.79\ \text{տ/տարի}) = 13.41\ \text{տ/տարի}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

### **5.1.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

### **5.2. Բնապահպանական միջոցառումների ծրագիր**

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

#### **5.2.1. Մթնոլորտային օդ**

Օդային աազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/  
ընթացքում իրականացնել ջրցան,

- սորուն նյութերը չպահեսավորել տարածքում և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

### 5.2.2. **Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի և հողային զանգվածների համար օգտագործել այնքան ջուր, որ չառաջանան արտահոսքեր,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- օդորակման համակարգում առաջացած արտահոսքը ուղղել կոյուղու ցանց,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

### 5.2.3. **Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում**

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն ըստ արտադրող ընկերությունների հրահանգների: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների դեպքում ազդեցություններ չեն սպասվում:

#### *Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- շինարարական և տրանսպորտային միջոցները ընտրել այն նախապայմանով, որ ըստ անձնագրային տվյալների աղմուկի մակարդակը չգերազանցի 95 դԲա ցուցանիշը:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ 45 դԲա, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի տներ) հեռավորությունը շինտարածքից:

**5.2.4. Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումն պետք է իրականացնել, առաջնորդվելով՝ - ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 82 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Քանի որ տարածքը քարքարոտ է, գրեթե չկա բերրի հողի շերտ, տեղ-տեղ հանդիպում է բերրի հողի շերտ, որը չի գերազանցում 10 սմ հաստությունը, որը սակայն հնարավոր չէ օգտահանել:

*Թափոնների կառավարման և հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝*

- քայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային հումք վաճառել կամ հանձնել լիցենզավորված կազմակերպություններին,
- մեքենա-սարքավորումների լիցքավորումը, քայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել, շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները



տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- շինարարական աղբը ժամանակին տեղափոխել համայնքի ղեկավարի կողմից հատկացված աղբավայր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն: Ըստ նախնական գնահատման շինարարական աղբի ծավալը շինարարության ամբողջ ընթացքում սպասվում է 600-660 մ<sup>3</sup>:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ում և ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ»-ում ուղղակի շինարարական աղբ դասակարգում չկա, առավել մոտ է՝ 9120060101004 ծածկագիրը, վտանգավորության դասը՝ IV:

Կենցաղային աղբ - 9120040001004 (կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) վտանգավորության 4-րդ դաս:

Թափոնների առաջացման նորման 0.3 մ<sup>3</sup>/տարի 1 մարդու համար: Տեսակարար կշիռը՝ մոտ 0.25 տ/մ<sup>3</sup>: Ընդամենը մեկ տարվա համար՝ 36 մ<sup>3</sup>/տարի:

Շինարարության աշխատանքների ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

Կենցաղային աղբը հավաքվում է հատուկ տեղադրված աղբամաններում և համապատասխան սանիտարական ծառայության կողմից պարբերաբար տեղափոխվում համայնքի աղբավայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջանում է չաղտոտված հող, որը ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրամանով հանդիսանում է 5-րդ դասի թափոն՝ «Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող», ծածկագիրը՝ 31401100 08 99 5:

### 5.2.5. **Կենսաբազմազանություն**

Անմիջապես նախատեսված տարածքում բնական բուսածածկ և վայրի կենդանիների ապրելավայրեր չկան:

Նախատեսված են կենսաբազմազանության պահպանության հետևյալ միջոցառումները՝

- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում ահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- շինհրապարակում խուսափել շինարարական աղբի այրումից և կուտակումից,
- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:

Տարածքում առկա են 80 ծառ՝ բարդի և փշատերև: Դրանց մի մասը չորացած կամ կիսաչոր վիճակում են և հառվելու են: Մնացած մասից և վս մի քանի ծառ, որոնք գտնվում են շինությունների տաշածքում, նույնպես կհատվեն: Ընդամենը կհատվեն 60 – 65 ծառ: Կանաչապատման ծրագրի շրջանակներում նախատեսվում է տնկել 240 ծառ, այդ թվում 80 բարդի՝ ցանկապատի եզրերով, ինչպես նաև թխկի և հացենի:

### 5.2.6. **Սոցիալական միջոցառումներ**

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում,
- հնարավորության սահմաններում աշխատանքների համար ներգրավել տեղի բնակչությանը,

- ապահովել արժանավայել վարձատրություն, արձակուրդ և սոցիալական պաշտպանություն:

### 5.2.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի և կենցաղային պայմաններ, այդ նպատակով նախատեսվում է տեղադրել երեք հատ շարժական տնակ, որոնք կմիացվեն ջրատարին և կոյուղու ցանցին: Տնակներում կլինեն հանգստի սենյակներ, 4 զուգարան՝ երկուական տրամարդկանց և կանանց համար, 4 վլացարան, սննդի ընդունման երկու սենյակ/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

### 5.3. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար հետագայում մշակվող տարածքի կանաչապատման սխեմային համապատասխան: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կանաչապատման նվազագույն տոկոսը /ներառյալ բնական լանդշաֆտը/ կազմվելու է 40.6 տոկոս:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Ծառատունկը կիրականացվի «Հայանտառ» ՊՈԱԿ տեղի մասնաճյուղի մասնագետների հետ համաձայնեցված:

Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու են տարածաշրջանի բուսականությանը համապատասխան ծառեր և բուսատեսակներ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել արտաքին զննում և ետնախազձային մոնիթորինգ՝ նույնպես արտաքին զննման եղանակով:

Բոլոր բնապահպանական միջոցառումները կներառվեն շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ԶԱԳ + ՕԱԳ, \quad \text{որտեղ՝}$$

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ԶԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողաձածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով: Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$Ա = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \psi_{i} P_{i}, \quad \text{որտեղ}$$

Ա -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,



Շ<sub>գ</sub> -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի ընդունվում է 10:

Փ<sub>g</sub>-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$$\Phi_g = 1000 \text{ դրամ:}$$

Վ<sub>i</sub>-ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Ք<sub>i</sub> -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Ք<sub>i</sub> գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q (3 S_{ui} - 2 U\theta A_i), S_{ui} > U\theta A_i (2)$$

որտեղ՝

UθA<sub>i</sub> -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S<sub>ui</sub> -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ Uθ < 4 գերազանցումներ չկան՝ Ք<sub>i</sub> = S<sub>ui</sub>

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1. Տնտեսական վնասի ցուցանիշները

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շ <sub>գ</sub>	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	S <sub>ui</sub>	q	Ք <sub>i</sub> =S <sub>i</sub> x q			U = Շ <sub>գ</sub> Φ <sub>g</sub> ∑ Վ <sub>i</sub> Ք <sub>i</sub>
Անօրգանական փոշի	13.41	1	13.41	10	10	1 341 000
Ընդամենը						1 341 000

Ընդամենը տնտեսական վնասը կկազմի՝ 1 341 000 դրամ/տարի:

## 7. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Նախագծային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p> <p>Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռքբերում</li> <li>- Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում,</li> <li>Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային պայմանները</li> <li>- Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</li> <li>- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:</li> <li>- Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:</li> </ul>	<p>Շինարարության կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող</p> <p>Երևանի քաղաքապետարան</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</li> <li>- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</li> </ul>	Կապալառու	
<p>Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Օդի աղտոտման և փոշու կառավարում մթնոլորտային օդի և աղմուկի մակարդակի մշտադիտարկում շինարարության ողջ ընթացքում արտաքին դիտարկման եղանակով:</li> <li>- Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով;</li> <li>- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար;</li> <li>- Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով;</li> <li>- Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար</li> <li>- Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ</li> <li>- Շրջակա տարածքները պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</li> </ul>	Շինարարության կապալառու	<p>Տեխնիկական վերահսկող,</p> <p>Երևանի քաղաքապետարան</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>

	Պատահական գտածոի հայտնաբերում	- աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները կդադարեցվեն և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;  Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով Հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Աշխատանքների ընթացքում բացառել թափոնների և աղբի այրում	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող,  Երևանի քաղաքապետարան
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան



<p>Շինհրապարակի վերականգնում</p>		<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</li> <li>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները:</li> <li>- Մաքրել շինհրապարակը աղբից</li> <li>- Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</li> <li>- Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները</li> </ul> <p>Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր կաչողականություն աճն ապահովելու համար</p>	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p>
<p>Շինարարական աշխատանքներ</p>	<p>Բուսականության և վայրի կենդանիների ապրելավայրերի պաշտպանություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար օգտագործել անտառային հողերից հնարավոր հեռու տեղամաս,</li> <li>- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում ահմանափակ արագությամբ (<math>\leq 30</math> կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում առնվազն 30 րոպե պարբերականությամբ,</li> <li>- տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս արգելել,</li> <li>- շինհրապարակում խուսափել շինարարական աղբի այրումից և կուտակումից,</li> <li>- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին:</li> </ul>		

Մեղմացնող միջոցառումների ինդիկատորիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտավորապես՝ 1,2%

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՛վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	- Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու Երևանի քաղաքապետարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի վնասումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս՝ Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> <li>- Իրականացնել շահագործվող տրանսպորտային և այլ փոխադրամիջոցների պարբերական ստուգումներ</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան

Հողային աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> <li>- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում</li> <li>- Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով</li> <li>- Օդի աղտոտման և փոշու կառավարում մթնոլորտային օդի և աղմուկի մակարդակի մշտադիտարկում շինարարության ողջ ընթացքում արտաքին դիտարկման եղանակով:</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում	Հողային աշխատանքների ընթացքում	Պատվիրատու Կապալառու քաղաքապետարան
